ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N1748-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտին գումար հատկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի

Դատական կարգադրիչների ծառայությունը, որպես պետական ծառայության հատուկ տեսակ ստեղծվել է 2008 թվականի հունվարի 1-ին՝ ՀՀ դատական օրենսգրքի 196-րդ և «ՀՀ դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածների հիման վրա: 2008-2010թթ. դատական կարգադրիչների աշխատանքի վարձատրության, ինչպես նաև պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով անհրաժեշտ ծախսերն իրականացնելու համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել են համապատասխան միջոցներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ դատական օրենսգրքի մի շարք (197-րդ, 203-րդ, 204-րդ, 205-րդ, 210-րդ, 220-րդ, 225-րդ, 227-րդ) հոդվածների համաձայն՝ դատական կարգադրիչների ծառայության համապատասխան գործառույթները կարգավորվում են «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» և «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, իսկ քրեակատարողական ծառայողները, ինչպես նաև դատական ակտերի հարկադիր կատարման ծառայողները «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի հիման վրա հավասարեցված են զինծառայողներին, վերջիններս էլ ազատված են պարտադիր սոցիալական ապահովության և եկամտահարկի գծով վճարումներից՝ դատական կարգադրիչների աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներից չեն կատարվել «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» և «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքներով սահմանված վճարումները, որի հետևանքով առաջացած պարտավորությունները կազմում են ***350092.3 հազ. դրամ,*** այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման.

«Փաստացի սոցիալական ապահովության վճարներ» հոդվածով- ***287914.5 հազ. դրամ***:

«Այլ հարկեր» հոդվածով- ***62177.8 հազ. դրամ*** (եկամտահարկ),

Ի կատարումն ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի մոտ 2010 թվականի սեպտեմբերի 15-ին կայացած՝ ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում ՀՀ դատական դեպարտամենտին նախատեսվելիք հատկացումների մասին խորհրդակցության N23.6/[48775]-10 արձանագրության հանձնարարականի 3-րդ կետի 1-ին ենթակետի, ինչպես նաև սույն թվականի օգոստոսի 24-ին կայացած՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծում ՀՀ դատական դեպարտամենտին նախատեսվելիք հատկացումների

մասին խորհրդակցության N23.6/[87035]-11 արձանագրության հանձնարարականի 3-րդ կետի 1-ին ենթակետի՝ 2008-2010թթ. պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով առաջացած ապառքները, ինչպես նաև եկամտահարկի գծով առաջացած հարկային պարտավորությունները մարելու նպատակով ներակայացնում ենք «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N1748-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտին գումար հատկացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավար՝ Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N1748-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտին գումար հատկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման հետևանքով այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության մասին

«Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N1748-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտին գումար հատկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N1748-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտին գումար հատկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման հետևանքով առաջացող լրացուցիչ բյուջետային ծախսերի մասին

«Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N1748-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտին գումար հատկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման հետևանքով Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված ծախսերը կավելանան 350092.3 հազ. դրամով:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N1748-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտին գումար հատկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ներկայացված դիտողությունների և առաջարկությունների

հ/հ	Առաջարկություն ներկայացնող մարմինը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
	ՀՀ ֆինանսների նախարարություն (07.10.2011 թվականի N 1/4.1-2/85699-11)	Առաջարկվում է նախագիծը շրջանառության մեջ դնել նոր խմբագրությամբ:	Հաշվի առնելով առաջարկությունը՝ նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվում ՀՀ ֆինանսների նախարարության խմբագրությամբ:
	ՀՀ արդարադատության նախարարություն (12.10.2011 թվականի N6398-11)	Նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:	